159

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱ՛Ն ԽՈՐՀՐԴԱՅԻ՛Ն ՀԱ՛ՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒ՛Ն

*ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք*

# ԳՐԱԳԵՏ

## ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԵՑԻՆ
ՔԱՂԼՈՒՍԱՎՈՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 87
ԵՐԵՎԱՆ — 1923

# ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻՆ

Դասագիրքը կազմված է Մոսկվայի Համառուսական Մեթոդիստների կոնֆերենցիայի կողմից (1922 թ. սեպտ. 7—12), ընդունված ամբողջական խոսքերի վերլուծական-համադրական մեթոդով: (Տես Руководителям занятий № 3, изд. ВКЧ):

Դասն սկսվում է բանավոր զրույցով, որի նպատակն է բացատրել, վերլուծել և զարգացնել տվյալ դասի նյութը կազմող լոզունգի իմաստը:

Այնուհետև լոզունգը պետք է գրել գրատախտակի վրա խոշոր և պարզ տպագիր տառերով, հստակ ու բարձրաձայն կարդալ ու արտասանել տալ, վորպեսզի սովորողը բառի հնչյունական կողմը զուգորդի դրա գծագրական պատկերի հետ: Յերբ սովորողները կարողանում են բառի գծագրական պատկերը ճանաչել և գտնել պահանջված բառերը լոզունգի կամ այդ դասում յեղած մյուս խոսքերի մեջ, պետք է անցնել (ինչպես մենք արել ենք գրքում) բառերը վանկերի վերածելուն և ստացված վանկերից նոր բառեր կազմել: Յեթե այդ հնարավոր չի յեղել (այդ հնարավորությունը խիստ սահմանափակ է), աշխատել ենք լոզունգից հանած հնչյուններից նոր բառեր կազմել: [illegible] այս աշխատանքի համար [illegible] մեծատառ [illegible] տառերից-

[illegible] հնչյունները հանված են լոզունգի այն բառերից, վորոնց [illegible] տվյալ հնչյունը [illegible] բառասկզբին կամ բառավերջին լինելու կամ հաճախ կրկնված լինելու պատճառով:

Առաջին դասերի բոլոր հնչյունները հանված չեն՝ սովորողին միանգամից շատ ծանրաբեռնելու համար: Միայն 4—5 դասի ընթացքում են սպառվում այդ դասերի մեջ գործածված բոլոր անծանոթ հնչյունները, վորից հետո այլևս անծանոթ գրեր չեն գործածվում:

Յերբ վերլուծությամբ խոսքից ստանում ենք բառեր, բառերից վանկեր և ի վերջո հնչյուններ, այնուհետև այդ տարրերի զանազան դասավորումներով կազմում ենք նոր բառեր և խոսքեր (համադրություն).

Մեթոդական այս ընթացքը վերջին դասերին այսպիսի մանրամասնությամբ չի պահպանվում, վորովհետև շատ բան հետզհետե ավելորդ կրկնություն է դառնում:

Այսպիսի աշխատանքները նոր են մեր կյանքում, հազիվ 2—3 տարվա անցյալ ունեն: Բնական է, ուրեմն, վոր այս գրքույկն ունենա թերություններ: Փորձը պիտի ցույց տա, թե վորոնք են այդ թերությունները: Ուստի կը խնդրեյինք հասակավորների անգրագիտության վերացման դպրոցական գործին մոտիկ կանգնած մանկավարժներին փորձից հանած իրենց դիտողությունները հաղորդել Գլխքաղլուսվարի դպրոցա-դասընթացային բաժնին՝ Յերևան, Լենինի փողոց, № 32:

ԿԱԶՄՈՂՆԵՐ

Յերեվան, 2/XI 1923 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

*ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք։*

(23×16) 491.542-81

# ԳՐԱԳԵՏ

## ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քանի դեռ մեզ մոտ կա անգրագիտություն, քաղաքական լուսավորության մասին խոսք չի կարող լինել։ Անգրագետը քաղաքականությունից դուրս է։

ԼԵՆԻՆ

---

ԿԱԶՄԵՑԻՆ
ՔԱՂԼՈՒՍԱՎԱՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

ԱՐԽԻՎ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — № 87
ԵՐԵՎԱՆ — 1923

194 - Ա 9 2

Լուսաւորչեան տպարան Վաղարշապատում.

ուսումը ուժ է
ուժ է ուսումը

ու-սու-մը ուժ է    ու
ուս ում ուժ
սուս սեմ ես է    է
ես ուս է
ես-սեմ է

---

ուսում ունես — ուժ ունես
ունես ուսում — ունես ուժ

ու-նես ու-սում
ուսում ունեմ
ու ում    մ
է ես ուս սուս    ս
ու ուժ    ժ
ուսում — ես է ուժը
ուսում ունեմ — ուժ ունեմ

---

ուշ լինի — նուշ լինի
նուշ լինի — ուշ լինի

լինի նուշ — լինի ուշ
լի-նի ուշ — լի-նի նուշ

լի նի լի ուլ լի ու լի լ
ու ուշ նուշ շուն շ
լի ել են մի միս ե

շեշ շել շուշի մուշ
միս լուսին լենին

ուսում ունես — ուժ ել ունես
ուշ ուսումն ել նուշ ե
ես մի շուն ե. սուլում եմ՝
լսում ե ու սուս ե

---

ով կարդա — նա մարդ ա
ով մարդ ա — նա կարդա

կար-դա դա դու դես դեն դ
կար կա կամ կալ կում մուկ կ
նա նուշ են շեն ին կին ն

կարդա — ուժ կունենաս
կինն ուսում ունի — կինն ուժ ունի
լի ու կլորակի կարդա ու կարդա
ուսում — դա մեր ուժն ե
եսօր դաս ունեմ

---

շինականը շինարար է
շինարար է շինականը

շի-նա-կա-նը ու-սու-մը ը
շի-նա-կան ակ կա սա ա
շի-նա-րար ա-րա կար-դա ր

շինական ընկեր, կարդա, շինիր։
շինիր — շէն կը լինես։
շիրակը շինարար է։

կարմիր դրօշակը շինականի դրօշակն է։
ընկեր, մի ասա ուսումն ուշ է։
ուշ է — ելի անուշ է։

շինիր շինական,
շինիր շարունակ.
լի ու կերակրի
շինիր ու շարիր,
կարդա ու վարիր։

---

## Ով շինի — շէն կը լինի
## շէն կը լինի — ով շինի

ով վոր ո
վոր ով վ

Ով կարդա ու շինի, շէն ու ուժով կը լինի։
Միայն շինիր, վոր ավելի ուժով լինես։
Տնանկ մարդն անուժ է։
Լուսավորվիր, վոր լուսավորես։
Վորքեդ ել վոր ուսում ունենա — ուժով կը լինի։

| | |
|---|---|
| Ուսումն ուժ է։ | Ու ու  Ե ե |
| *Ուսումն ուժ է:* | *Ու ու  Ե ե* |
| Ուսում ունես—ուժ ունես | Մ մ  Ս ս  Ժ ժ |
| *Ուսում ունես-ուժ ունես:* | *Մ մ  Ս ս  Ժ ժ* |
| Ուշ լինի—նուշ լինի։ | Լ լ  Ի ի  Շ շ |
| *Ուշ լինի—նուշ լինի:* | *Լ լ  Ի ի  Շ շ* |
| Ով կարդա, նա մարդ ա։ | Դ դ  Կ կ  Ն ն |
| *Ով կարդա, նա մարդ ա:* | *Դ դ  Կ կ  Ն ն* |
| Շինականը շինարար է։ | Ա ա  Ր ր  Ը ը |
| *Շինականը շինարար է:* | *Ա ա  Ր ր  Ը ը* |
| Ով շինի—շէն կը լինի։ | Ո ո  Վ վ |
| *Ով շինի—շէն կը լինի:* | *Ո ո  Վ վ* |

---

Ով աշխատի, նա ուտի

*Ով աշխատի, նա ուտի*

աշ-խա-տի ուտի  Տ տ  *Տ տ*

աշխատի խա-վար վախ  Խ խ  *Խ խ*

Աշխատիր, որ ուտես։ Դաշտում աշխատիր, տանը սովորիր։ Մի ժամանակ աշխատավորը [illegible] աշխատում, դատարկ եր նստում։ Նա անուսում եր ու անուժ։

Ուժն ու ուսումը տերտերինը, դրամատերինն ու իշխաններինն էր։ Մեր օրով ով աշխատի, նա մենակ կուտի։ Աշխատավորն իր վաստակի տերն է։ Աշխատավորն աշխատում, աշխատավորն էլ ուտում է։

---

| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |

---

## Մեկը բոլորի համար,

## *Բոլորը մեկի համար*

Մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար

բո-լո-րի Բ բ *Բ բ*

համար Հ հ *Հ հ*

Բոլորը մեկին, մեկը բոլորին։
Հաշվիր մեկ-մեկ բոլորին։
Վուշը մշակիր, մանիր, շորեր կարիր։
Բամբակ մշակիր, շեն կլինիս։

Շինականն աշխատում է բանվորի հետ ու նրա համար։ Բանվորն էլ աշխատում է շինականի հետ ու նրա համար։ Շինականը բանվորին տալիս է սնունդ։ Բանվորը շինականին տալիս է հագուստ։

Գող կանգնի, վերան կը կոտրի

*Գող կանգնի, վերան կը կոտրի*

Գե-րան գեր Գ գ *Գ գ*

Ղ ղ *Ղ ղ*

Կանգնիր ամուր, չինական,
Գեղի տերն ու տիրական.
Երեկ աղեն էր տերը,
Աղան ու իր տերտերը.
Տէրն ես հիմա ամենի,
Գընա հանգիստ աշխատիր։

*Կանգնիր ամուր, չինական,*
*Գեղի տեր ու տիրական,*
*Երեկ աղեն էր տերը,*
*Աղեն ու իր տերտերը.*
*Տէրն ես հիմա ամենի,*
*Գընա հանգիստ աշխատիր։*

Մեր գեղում հիմա դպրոցներ շատ կա։ Բոլորն աշխատում են գրել, կարդալ սովորել։ Հինգ տարի հետո բոլորն էլ գրագետ կը լինեն։ Էդ օրը բախտավոր օր կը լինի մեր գեղի համար։

——

Կարմիր բանակը մեր յերկրի պաշտպանն է։

Կարմիր բանակը մեր յերկրի պաշտպանն է։

Յերկ-րի Յ յ Յ յ

Պաշտ-պան Պ պ Պ պ

Ո՞վ է պաշտպանում մեր յերկիրը.— Կարմիր բանակը։ Ո՞ւմ է պաշտպանում Կարմիր բանակը.— աշխատավորներին։ Ո՞վ է կարմիր բանակայինը.— նույն աշխատավորը. այսօր նա սուր ունի, վաղը մանգաղ է (յեվ) արոր կունենա։

Մայիս

Գարնան ամիս
Սիրուն մայիս,
Նախշ ու նկար,
Բարով յեկար։
Յեկար, բերիր
Վարդը կարմիր,
Սուսան, սմբուլ,
Յերգ ու բլբուլ։

Մայիս

Գարնան ամիս
Սիրուն մայիս,
Նախշ ու նկար,
Բարով յեկար։
Յեկար, բերիր
Վարդը կարմիր,
Սուսան, սմբուլ,
Յերգ ու բլբուլ։

—

Հողը գյուղացուն, գործարանը բանվորին

*Հողը գյուղացուն, գործարանը բանվորին*

Գոր-ծա-րան գործ Գ գ *Գ գ*

Գյու-ղա-ցի գյուղից Ց ց *Ց ց*

Ցարերի ժամանակ բանվորն աշխատում եր օրական 10-12 ժամ և ստանում միայն կոպեկներ։ Նա ապրում եր խավար ու խոնավ նկուղներում։ Ծույլ շահագործողներն ապրում եին պալատներում՝ հանգիստ, ուրախ։ Գյուղացին սակավահող եր և կերակրում եր աղաների մի մեծ բանակ։ Շահագործման ծանր լուծն ան-տանելի յեր աշխատավորների համար։ 1917-ի Հոկտեմբերին միացած բանվորն ու գյուղացին տապալեցին ցարի լուծը և հաստատեցին իրենց խորհուրդները։ Խորհուրդներին մասնակցում են միայն բանվորն ու գյուղացին և նրանց պաշտպան կարմիր մարտիկը։

## Աշուն

Ով ցանել է՝
հնձում է,
ով տնկել է՝
քաղում է։ Ձ ձ

Վախ չունի՝
ով աշխատել է, Չ չ
հոգս չունի՝
ով ժողովել է։

Կարիճն աչք ունի
կանաչ կարմրին,
իսկ ծույլն աչք ունի
ցրտին ու սովին։

## Աշուն

Ով ցանել է՝
հնձում է,
ով տնկել է՝
քաղում է։ Ձ ձ

Վախ չունի՝
ով աշխատել է, Չ չ
հոգս չունի՝
ով ժողովել է։

Կարիճն աչք ունի
կանաչ կարմրին,
իսկ ծույլն աչք ունի
ցրտին ու սովին։

Կարմիր ռանչպար, ձեռք տուր բանվորին

Կարմիր ռանչպար, ձեռք տուր բանվորին

Դու ռանչպար ես, իսկ յես՝ բանվոր,
մենք յեղբայր ենք, ընկեր հին,
մենք չենք տեսել ուրախ մի օր
ու լացել ենք դառնագին։

Կուլակն աղեղ կռեց ի մի
մեր բախտն ու կամքն անպատան.
ձեռք ձեռքի տանք, գնանք հիմի
դեպի կարմիր ապագան։

Ո ո Ք ք

Դու ռանչպար ես, իսկ յես՝ բանվոր,
մենք յեղբայր ենք, ընկեր հին,
մենք չենք տեսել ուրախ մի օր
ու լացել ենք դառնագին։

Կուլակն աղեղ կռեց ի մի
մեր բախտն ու կամքն անպատան.
ձեռք ձեռքի տանք, գնանք հիմի
դեպի կարմիր ապագան։

Ո ո Ք ք

---

Վոչ մի կտոր չը ցանած հող չը թողնել

Չը ցանած հող վոչ մի կտոր չը թողնել

Չը-թող-նել, թող  Թ թ Թ թ

Անցան, անվար հող չթողնել մի կտոր

հող չունես — չես վարի
չես վարի — չես ցանի
չես ցանի — չես կալսի
չես կալսի — դատարկ կը նստես

Հիմա հող ունես — պիտի վարես

թե վարես,
թե ցանես,
թե կալսես
դու էլ կը կշտանաս, մեր յերկիրն էլ
կը կշտացնես։

---

Կինը հիմա ազատ քաղաքացի յե։

Կինը հիմա ազատ քաղաքացի յե։

Ա.-զատ զատ Զ զ Զ զ

Մի ժամանակ կինն ազատ քաղաքացի չեր։ Նա զուրկ եր իրավունքներից։ Հիմա նա ազատ քաղաքացի յե, հավասար տղամարդուն։ Աշխատավոր կինը հիմա իր աշխատավոր ամուսնու կամ յեղբոր հետ վերաշինում ե մեր յերկիրը։

Գյուղումն էլ կինը ձգտում է գրագետ լինել, լուսավորել իր միտքը, զարգանալ։ Աշխատավոր կինը միացել է պրոլետարների հզոր բանակին։

---

## Անգրագետ

Իր վորդուց մայրը
նամակ ստացավ,
կարոտած սիրտը
վեր ու վար յեղավ։

Նայում է նամակին՝
սիրուն նշաններ,
բայց այդ գրերի
միտքը չըգիտեր։

Տղան ինչ է գրել՝
պետք է իմանար,
բայց նրա տանն էլ
կարդացող չկա.

Դուրս յեկավ փողոց,
մի քարի նստեց՝
գյուղի դպրոցի
սանին պատահեց։

Յեվ նրան կանչեց.
«Մարկոսի տղա,
մոտս յեկ, ապրես,
նամակը կարդա»։

---

## **Փա՛ռք ընկածներին։**

*Փառք ընկածներին։*

Փ փ *Փ փ*

Մեր հեղափոխական ուղին փշոտ է յեղել։ Հեշտ չեր փշրել դարերով պատրաստված հակառակորդ սև ուժը։ Նա ուներ զենք ու զորք,

փոխ ու մեքենա։ Աշխատանքի ազատագրման մեծ կռվում մենք թնդագլխորներ ենք ունեցել։ Նրանց արյան գնով ենք մենք փրկվել։ Նրանք մեռան, բայց նրանց գործն անմահ է։ Փառք մեծ գաղափարի զոհերին։

Հառաջ, դեպի լուռ ճանապարհ չկա։

*Հառաջ. դեպի լուռ ճանապարհ չկա։*

Ճանապարհ Ճ ճ *Ճ ճ*

Առաջ, Ջան Ջ ջ *Ջ ջ*

Ճանապարհը դեպի լուռ—տանում է դեպի առաջադրում, դեպի խավար ու սարկական կյանք։ Մենք ջախջախել ենք ցարերի, կալվածատերերի և կապիտալիստների ճնշումը։ Մեր բախտն ու վիճակը մեր ձեռն է հիմա։ Մենք քանդել ենք բոլոր կամուրջները մեր յետևից։ Մենք գնում ենք հառաջ, դեպի լուռ ճանապարհ չկա։

Մնացել է բերդը մեզ,
հաղթանակի յերթը մեզ.
անց են կացել ով կային,
հիմի կըգա հերթը մեզ։

Բոլոր փրոնտներում մերն է հաղթանակը։

Բոլոր փրոնտներում մերն է հաղթանակը

Հաղ-թա-նակ, հաղթ Թ թ Թ թ

Փրոնտ-նե-րում, փրոնտ Փ փ Փ փ

ԱՌԱՋԻՆ փրոնտն արտաքին և ներքին ռազմական փրոնտն էր։

ԵՐԿՐՈՐԴ փրոնտը շինարարական փրոնտն էր։ Մենք վերականգնեցինք գործարանը, մշակեցինք հողն ու հանքը, հաղթահարեցինք սովը, ծածկեցինք մեր մերկությունը։

ԵՐՐՈՐԴ փրոնտը լուսավորության փրոնտն է։ Մենք տգետ էյինք, խավար, անգրագետ։ Մենք ճիգ ու ջանք ենք թափում սովորելու, լուսավորվելու։

Լուսավորության փրոնտում էլ մենք կը հաղթենք։

—

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ա ա | Բ բ | Գ գ | Դ դ | Ե ե | Զ զ | Է է |
| Ա ա | Բ բ | Գ գ | Դ դ | Ե ե | Զ զ | Է է |
| Թ թ | Ժ ժ | Ի ի | Լ լ | Խ խ | Ծ ծ | Կ կ |
| Թ թ | Ժ ժ | Ի ի | Լ լ | Խ խ | Ծ ծ | Կ կ |
| Հ հ | Ձ ձ | Ղ ղ | Ճ ճ | Մ մ | Յ յ | Ն ն |
| Հ հ | Ձ ձ | Ղ ղ | Ճ ճ | Մ մ | Յ յ | Ն ն |
| Շ շ | Ո ո | Չ չ | Պ պ | Ջ ջ | Ռ ռ | Ս ս |
| Շ շ | Ո ո | Չ չ | Պ պ | Ջ ջ | Ռ ռ | Ս ս |
| Վ վ | Տ տ | Ր ր | Ց ց | Փ փ | Ք ք | Ֆ ֆ |
| Վ վ | Տ տ | Ր ր | Ց ց | Փ փ | Ք ք | Ֆ ֆ |

---

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X |



Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ ԳՐԱԴԱՐԱՆ

# ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

## Հատիկ

Լույսը բացվում է, շուտ արտը գնամ,
պատռեմ սուր խոփով յես կուրծքը հողի,
իմ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ
մինչև օրերը ամռան ուրնէ։

Թաղեմ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ։

Ծլիր, կանաչիր, վոսկե սավանով
ծածկիր իմ արտը փոքր ալեծածան։
Նոր այն ժամանակ անուշ շշյունով
տուր ջարդված սրտիս մի քուն հանգստյան։

## Յերկրագործ

Արև չծագած մաճն է քո ձեռին.
յոթ զույգ յեզ, գոմեշ լծած գութանին՝
ծրում ես, պատռում դու կոշտ ու խոպան,
լեռներ ու դաշտեր, հանդ ու անդաստան։
Ցանում ես ցորեն, կորեկ ու գարի,
հաճար ու վարսակ, բամբակ ու բրինձ։
Ծլում են ծաղկում ճակտիդ քրտինքով
քո վարած դաշտեր, վոր լի յեր փշով։
Անցնում է գարուն. վոսկեզօծ հասկեր
լցնում, ծածկում են քո սիրուն արտեր։
Քամին փչում է, արտը տատանում.—
կարծես նոր հարս է, հերանյան է գնում։
Հասել է ամառ. մանգաղը ձեռիդ
հնձում ես, հնձում, խուրձեր կապոտում։
Խուրձերը բարդ-բարդ կրում ես, բերում
ու առատությամբ կալում դիզում։
Կաշան ես անում, կալսում ու զատում,
մաքուր ցորենը տանդ ամբարում,
իսկ չոր դարմանը ձմեռվա պաշար
մարագդ լցնում անասնոց համար։
Յեվ յերբ փչում է ցրտաշունչ ձմեռ,
խրճիթում նստած քո խոփն ես սրում,
արոր ու գութան սարքում, պատրաստում,
ու գարնան գալուն նորից սպասում։
Ո՜հ, յերկրագործ, յերկրագործ,
վորքան սիրուն է քո գործ։

---

## Բարի գործ

Յոթանասուն տարեկան ծերունին պարտեզի մեջ տանձի ու խնձորի ծառ եր տնկում։ Շատ աշխատելուց խեղճը քրտնել, ջուր եր դառել։

Մի յերիտասարդ տեսավ ծերունուն և ասաց. «Ծերուկ, ինչու՞ յես իզուր նեղություն քաշում, ինչու՞ յես տանջվում, չարչարվում. մինչև այդ ծառերը պտղաբերեն, մեծանան, պտուղ տան՝ դու կը մեռնես»։

— Իհարկե կը մեռնեմ,— պատասխանեց ծերունին,— բայց ինչպես յերևում է՝ դու կարծում ես, թե մարդ միայն իր համար պիտի աշխատի։ Վո՛չ, վորդիս, ուրիշների համար ել պիտի մտածենք։ Ահա՛, տնկում եմ այս ծառերը. թող սրանք մեծանան, պտուղ տան։ Թո՛ղ յես մեռած լինեմ, ի՞նչ անենք.— ուրիշները կուտեն և կը հիշեն իմ բարի գործը։

---

## Գյուղ ու քաղաք—ուժը հավար

Գյուղից քաղաք են տանում—հաց, միս, կաթ, յուղ և ուրիշ սննդամթերքներ։ Քաղաքը պետք ունի գյուղի զանազան ապրանքների՝ վուշի, կանեփի—քաթան պատրաստելու, բազուկի—շաքար շինելու և այլն։

Քաղաքից գյուղ են փոխադրում—շաքար, աղ, ասեղներ, թել, յերկաթ, մեխ և այլ ապրանքներ։

Գյուղի համար ել շատ բան է պետք—գութաններ, փոցխեր, գերանդիներ, մանգաղներ և զանազան մեքենաներ, վորոնցով շուտ է գործ տեսնվում։

Քաղաք տեղի գրագիտությունն ավելի յե։ Այնտեղ բարձրագույն դպրոցներ ել կան, վորտեղից դուրս են գալիս գյուղատնտեսներ, յերկրաչափներ, ճարտարապետներ և ուրիշ շատ տեսակի մասնագետներ։

Քաղաքումն է, վոր տպվում են գրքեր, որացույցներ, լրագրներ և ամսագրներ։ Դրանցից է, վոր իմանում ենք, թե ինչպես պետք է ուղղենք մեր կենցաղը, ինչպես գիտությունը գործ դնենք մեր օգտին։ Դրանք հարկավոր են քաղաքին ել, գյուղին ել։

Քաղաքը չի կարող ապրել առանց հացի և ուրիշ սննդամթերքների. գյուղն ել առանց քաղաքի անճա-

բակ է. մի յերկու տարի գլուխ կը պահի, բայց հետո փայտով պետք է վարի, ցանի։
Գյուղ ու քաղաք—ուժը հավաք։

---

## Նոր առավոտ

Ի՞նչ եմ անում մենակ կյանքը,
վոր խեղճ մնամ ու զրկված.
ձեռքս կտամ իմ ընկերոջ
ու միշտ կանեմ սիրտս բաց։

Դե՛, ռանչպարներ, վոտքի յելնենք,
մեզ է սպասում խամ դաշտը.
մեկի տեղը հազար յելնենք,
մեզ է կանչում նոր կյանքը։

---

## Տերտերի գործադուլը

Տէր Թադևոսը դժգոհ էր.
Իրեն տված հասույթը
շատ քիչ էր։
Հին օրերից սովոր էր
լցնել իր ամբարները։
Եվ քարոզել,
եվ բողոքել,—
վոչինչ չօգնեց…
Բայց լսել էր,
թե բանվորն էլ
մի բան վոր ուզեր
ու չարանար,
գործադուլ
կը հայտարարեր։
Ուզեց ինքն էլ
ճիշտ այդպես
հայտարարել
գործադուլ։
Քրիստոսի հարությունից
մի օր առաջ
յեկեղեցու դուռը կողպեց,
տիրացուին հետն առած
տանը նստեց,
հայտարարեց
գործադուլ.—
Մինչև տան գլուխ
իրեն չեն տա
մի-մի վոչխար,
տիրացուին՝
մի մի հատ ուլ,
աղոթք չկա,
յեկեղեցու դուռը չի բանա։

Տեր Բարսեղը շատ հույս ուներ,—
զատիկ որ եր․
զատիկ որով յեկեղեցու դուռը փակեն,—
գիտե՞ք՝ թե եդ ինչ անել եր…
—Ինչ պիտ անեն,
ուզեն չուզեն պիտի բերեն…
Կը կակղեն…
Զատիկ որով
ժողովուրդը հավաքվել,
թունդ վիճում ե,
մտածում ե՝
ինչ անել…
Ել թեր ու դեմ…
վըճռում են եդպես թողնել,
մինչ տերտերը խելքի գա,
ինքը բանա…
Տեր Բարսեղը տանը նստել
սպասում ե՝
թե գյուղացին հավաքում ե
փոշխար ե ու
դուռը բերի…
սպասում ե մինչ իրիկուն։
…Վայ ե տալիս իրեն գլխուն.—
մի՜ ասվել եր ելի ինքը.
ձեռքից եդպես
բաց եր թողել
առուտուրի հաջող օրը,
պատարագն ու տնօրհնեքը,
«գյալուրները»։
Գործադուլը
տունը քանդեց.
գործադուլը
վիժեց.

# Կոմսոմոլի զատիկը.

Զատիկ բերեց կանաչ գարուն
մեր դաշտերին ու ձորերին.
աշխատանքը հնչեց յեռուն
մեր գեղացու յերակներում:

Զատիկն եկավ կանաչներով,
հաղթ ու կարմիր ջահելներով.
Կոմսոմոլը յելավ գեղով
կարմիր խոսքով, կարմիր յերգով:

Տերտերները ահ ու դողով,
փարաջաները ուսերով
տափ են մտնում խորաններում՝
«տեր ողորմյան» բերաններում:

Կոմսոմոլը գեղի միջով
անցնում հպարտ ու խիտ շարքով՝
աշխատանքի հզոր յերգով
ամբողջ գեղը թնդացնելով:

Վողջունում է կարմիր գարնան,
վոր դուրս քշեց ցուրտ ձմեռվան.
վողջունում է աշխատանքը,
վոր ստեղծում է ամեն բան:

Ու յերգում է Կոմսոմոլը.—
«Աշխատանքի տոնն է էսօր.
տերտերները հեռու կանգնեն,
բավական է գեղին խաբեն»:

Ու յերգելով՝ գեղի միջով
անցնում են մեր ջահելները.
տերտերները ահ ու դողով
պահ են մտնում խորանները:

# Ջրի կաթիլի ճանապարհորդությունը

I

— Ա՜խ, ինչպե՜ս կուզեմ վերև բարձրանալ, վերև՜, շա՜տ վերև, էն սարի գլխին, էն ամպի մոտ. արևի քով, աստղերին հասնել.—ասաց մի կաթիլ։

— Յես էլ եմ ուզում, յես էլ,—ձայն տվին ծովից շատ կաթիլներ.—վերև բարձրանալ, վերևից նայել, թե ինչ կա այստեղ աշխարհի վրա։ Էնտեղից տեսնել սարեր, ձորեր, անտառներ, դաշտեր, քաղաքներ, ծովեր։ Ա՜խ, ի՜նչ լավ կը լիներ։

II

Արևը լսեց, տաք ճառագայթներ ուղարկեց, ջրի կաթիլներին վերև կանչեց։ Մեր կաթիլները քիչ-քիչ տաքացան, անտեսանելի գոլորշի դարձան, վերև բարձրացան։

Նրանք շա՜տ, շա՜տ բարձրացան, սարերից էլ վերև, ամպերին մոտեցան։

— Էստեղ ի՜նչ ցուրտ է, ասաց մի կաթիլ և կուչ յեկավ. վերևում դժվար է ապրել։

— Այո՛, այո՛, ձայն տվին ամենքը. ի՜նչ լավ կը լիներ, առաջվա պես ներքևում լինեյինք։

III

Արևը լսեց. ցուրտ քամին ուղարկեց։ Գոլորշիները ցրտից կուչ ու ձիգ արին, իրար մոտեցան, կամաց-կամաց սեղմվեցին իրար և տեսանելի ամպ դարձան։

— Ի՜նչ մութ ամպեր են, ասացին մարդիկ ներքեվում։

— Ես ի՜նչպես ցուրտ է, ի՜նչ պաղ քամի յե, ասացին ամպ դարձած գոլորշիները, ավելի իրար մոտեցան, նորից կաթիլներ դարձան։

IV

Բարև ձեզ, բարև, սիրելի ընկերներ, ասացին կաթիլները իրար։ Ա՜յ, հիմա լավ է։ Ի՜նչ լավ յեղավ, վոր ելի կաթիլ դարձանք։

— Ի՜նչ լավ անձրև է գալիս,—ասացին մարդիկ յերկրի վրա։

Խումբ-խումբ կաթիլներ գոռում-գոչյունով ներքև են վազում, հողը պատառում, ծաղիկ ու ծառ արմատախիլ անում և առաջ գնում։

V

— Ի՜նչ սոսկալի հեղեղ է,—ասացին մարդիկ։

— Ես շտապում եմ, շուտ ճամպա տվեք, ասում էր հեղեղը և առաջ գնում։

Այսպես նա շատ առաջ գնաց, հասավ մեծ գետին։

Հեղեղն այստեղ շուտով կուլ գնաց ու սկսեց գետի հետ հանդարտ հոսել։

Մեր կաթիլներն այսպիսով վերջապես հասան ծովին՝ իրենց մոր գիրկը։

— Բարով յեկաք, իմ կաթիլներ, ասաց ծովը և գրկեց նրանց։

## Սերմնացան մեքենա

Ցանել կարելի յե ձեռքով կամ մեքենայով։ Ձեռքով դժվար է արտը հավասար ցանել։ Մեքենայով ցանքն ավելի արագ է կատարվում. մինչդեռ ձեռքով մի օրում 3 դեսյատին հազիվ կարելի յե ցանել, մեքենայով մինչև 5 դեսյատին կարող ենք ցանել։

Մեքենայով ցանքը լինում է շարքերով և սերմ էլ քիչ է գնում՝ դեսյատինին 8 փութ. այնինչ ձեռքով ցանելիս դեսյատինին գնում է 12 փութ։

Մեքենայով ցանելիս սերմերն արտում հավասար խորություն են ընկնում ու ծլում են միաժամանակ ու մի բարձրության։ Ձեռքով ցանելիս սերմերի մի մասը խորը թաղվում կամ յերեսն է մնում ու չի ծլում։

Սերմնացան մեքենայով ցանքը լավ է դուրս գալիս։ Սերմը սերմին չի խեղդում, բոլոր սերմերն էլ ազատ աճելու տեղ ունեն։

Շարքերը լայն յեղած դեպքում անպետք խոտերը կարելի յե քաղհանել։

Մեկի ուժը չի պատի սերմնացան մեքենա գնելու. բայց վոր շատվոր լինեն — ամեն մեկին քիչ ծախս կը նստի։

## Կով կերակրելը

Գյուղացին իր կովը կերակրում է գլխավորապես խոտով, դարմանով և քիչ է տալիս աղած-մանրած կեր՝ ալյուր, թեփ, քուսպ։ Ձմեռը շատ անգամ գետին է թափվում և կովը կերի մի մասը կոխկրտում է։ Կովերը կապվում են մութ գոմերում, խեղդված օդի մեջ։

Կովից շատ կաթ ստանալու համար պետք է ամենից առաջ վերացնել խնամքի հիշված թերությունները, պետք է գոմը տաք և լուսավոր լինի։ Իսկ ամենագլխավորը, պետք է կեր տալ կովին նրա կենդանի քաշի համեմատ։

Մեզանում կովի միջին կենդանի քաշը 9 փութ է, իսկ տված կաթը 8 գրվանքա։

Այս տեսակ կովին որական պիտի տալ 18 գրվ. խոտ, վորպեսզի նա չնիհարի և կաթը չպակասեցնի։ Սովորաբար կովին այդքան խոտ չեն տալիս, այլ ավելացնում են ավելի ուժեղ կեր, որինակ՝ թեփ (նայիր հաջորդ գլուխը) և կամ ավելի անուժ կեր, որինակ՝ ծղնոտը, բալումը։

Դանիայում գյուղացիները հաշվել տեսել են, վոր 1 գրվանքա թեփով կարելի յե փոխարինել 3 գրվանքա խոտ կամ 6 գրվանքա ծղնոտ-բալում։

Մի կերը մյուսով փոխարինելու ժամանակ, վորպեսզի հաշիվը ճիշտ լինի, ընդունված է միշտ ել ուժեղ կերով, որինակ՝ թեփով, ալյուրով կազմել կերի հաշիվը, դրա մի գրվանքան կերի մի միավոր հաշվելով։ Այդպիսով 18 գրվ. խոտն անում է 6 միավոր կեր, վորովհետև մի միավոր կերը հավասար է 3 գրվ. խոտի։

Այս 6 միավոր կերը կարելի յե զանազան տեսակի կերից ստանալ։

Կերը տալիս են այսպես.

Տարիների փորձից պարզվել է, որ կենդանի քաշով 3 փութ մսին պետք է օրենը 1 միավոր կեր։ Այդ մարմինն անփոփոխ պահպանող կերն է։ Դրանից կովը կաթ չի շինում, բայց չի յել նիհարում։

Կաթ ստանալու համար կովին պետք է տալ յուրաքանչյուր 3 գրվանքա կաթի դիմաց մի միավոր կեր՝ չհաշված յուրաքանչյուր 3 փութ քաշին տված մեկական միավոր կերը։

Իմ կովը տալիս է օրենը 12 գրվ. կաթ և ունի 12 փութ էլ կենդանի քաշ։ Հաշվեցեք տեսնենք՝ քանի՞ միավոր կեր պետք է տալ նրան։

Յերբ հաշվեք, կը տեսնեք, որ իմ կովին 8 միավոր կեր է հարկավոր։

Ծանոթություն. Կովը կշռել դժվար է, ուստի քաշը որոշում են չափելով։ Չափում են ուսի ծայրից մինչև պոչի արմատը՝ դնելով կովը հորիզոնական դրության մեջ. ասենք յեղավ 16 վերշոկ։ Ապա չափում են իրանի հաստությունը առաջի ոտների թիակների յետևից. ասենք յեղավ 30 վերշոկ։ $16 \times 30 = 600$ գրվ. կամ 15 փութ—կը լինի կովի քաշը։

Հարցեր. 1. Վորոշեցեք ձեր կովի քաշն ու կաթի քանակը։
2. Հաշվեցեք՝ օրական քանի՞ միավոր կեր պիտի տաք ձեր կովին։
3. Կազմեցեք կերի միավորների աղյուսակ ձեր կովի համար ցածում բերած օրինակով։

---

## Ցանկ կերի միավորների

Ամուր կեր.

| | | |
|---|---|---|
| 1 | գրվ. ալյուրեղեն | |
| 1 | » թեփ | |
| 3/4 | » քուսպ՝ կտավհատի, բամբակի և արևածաղկի | 1 միավոր |

Չոր յեվ կոշտ կեր.

| | | |
|---|---|---|
| 3 | գրվ. մարգագետնի չոր խոտ | |
| 4 | » ճահճային » » | |
| 2–2½ | գրվ. չոր առվույտ | 1 միավոր |
| 4–5 | » գարնացան դարման | |
| 5–6 | » աշնացան » | |

Կանաչ կեր.

| | | | |
|---|---|---|---|
| 12 | գրվ. | կանաչ խոտ | 1 միավոր |
| 8 | » | » առվույտ | |
| 15 | » | բազկաթեր | |
| 13 | » | կաղամբաթեր | |

Հյութեղ կեր.

| | | | |
|---|---|---|---|
| 8—10 | գրվ. | բազուկ | 1 միավոր |
| 8 | » | գազար | |
| 6 | » | կարտոֆիլ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կովիս տալիս եմ՝ | 6 | գրվ. | 2 | միավոր | խոտ |
| | 2 | » | 1 | » | առվույտ |
| | 6 | » | 1 | » | դարման |
| | 3 | » | 4 | » | քուսպ |

Կովս չի նիհարում և շարունակում է միաչափ տալ իր կաթը:

---

## Բանջարանոցի օգուտը

Բանջարանոցը պահանջում է աշխատանք ու գիտություն: Բանջարանոցի համար լավ հող է պետք, ուժեղ պարարտացում, ջուր և լավ գործիքներ:

Բանջարանոցը պիտի պատրաստել աշունքվանից:

Մի կոկիկ բանջարանոց կարելի յե սարքել 80 մարգից, յուրաքանչյուր մարգը 1½ արշին լայնության և 10 սաժեն յերկարության: Ամեն մարգին 1 սայլ գոմի աղբ պիտի տալ:

Գլուխ կաղամբը 1 մարգից տալիս է 100 գլուխ՝ 5 կոպեկ արժողությամբ յուրաքանչյուրը:

Մի մարգ տալիս է 5 ռուբլի. օգուտ:

Մի մարգից 3 փութ սոխ է ստացվում՝ փութը 2 ռուբլի. ուրեմն մի մարգից 6 ռուբլի:

Մի մարգից 2000 հատ վարունգ է ստացվում. 1000-ը 2 ռուբլի. ուրեմն մարգից 4 ռուբլի:

Բողկը ցանում են մարգի կողքերին. մի մարգից 50 կոպեկ միշտ տալիս է:

Հարցեր. Կազմեցեք աղյուսակ ձեր սերմած բանջարների. վորքան եք հավաքում, վորքան ծախսում և վորքան թողնում ձեր տնտեսության համար:

---

## Կարտոֆիլ

Մեզանից 100 տարի առաջ գյուղացիք կարտոֆիլին սատանի խնձոր անունն էին տալիս և նրա ուտելը մեղք համարում։

Այժմ տեղեր կան, որ գյուղացու հողի մեծ մասը կարտոֆիլն է բռնում։

Կարտոֆիլ տնկելը շատ օգտավետ է։ Մի դեսյատին կարտոֆիլը 3-4 անգամ ավելի օգուտ է տալիս քան հացահատիկը։ Կարտոֆիլին պետք է ուժեղ, թեթև և մաքուր հող։

Կարտոֆիլի հողը լավ մշակում են և տնկելուց հետո շարունակ քաղհանում, փխրացնում են։

Հաջորդ տարում կարտոֆիլի հողը շատ հարմար է ահատիկ ցանելու, վորովհետև անպետք խոտերը հանվել են։ Կարտոֆիլի հողը պարարտացնում են իրով։ Կարտոֆիլից պատրաստում են ալյուր, շա-աջուր, ոսլա։

---

## Բամբակ

Հայաստանը բամբակ ցանելու լավ շրջաններ ունի։ ևանի գավառում—Ղամարլու, Հրազդան, իս իածնում՝ Ղուրդուղուլի, Զանգիբասարի և Սարդա-աթի շրջանները։

Պատերազմների շնորհիվ բամբակի արդյունա-ությունը ընկավ։ Այժմ, յերբ բանվորն ու գյուղա-կպել են շինարար աշխատանքի, պետք է բամբակ չափով ցանել։

Ունենալով մեծաքանակ բամբակ՝ մենք հացի կարիք չ զգա։

Խորհրդային Ռուսաստանը հաց շատ ունի, բայց բակ չունի։ Յերբ մենք բամբակ ունենանք, ամեն կունենանք՝ հաց, հագնելիք, մեքենաներ, մանգաղ, անդի և այլն։

Այդ ամենն էլ իրենց վոտքով կգան բամբակի մոտ։

Ա 159

Բամբակը թանկացել է թե Խորհրդային Ռուսաստանում և թե ամբողջ աշխարհում, իսկ հացը էժանացել է, ուրեմն այժմ ձեռնտու յե բամբակ ցանել և ոչ թե ցորեն։

Ի՞նչ կարելի յեր ձեռք բերել պատերազմից առաջ մի փութ բամբակով

Ցորեն 12 փութ
կամ չիթ 70 արշին
» նավթ 10 փութ
» աղ 30 փութ։

Ահա թե ինչու Հայաստանի բամբակագործության կոմիտեն աշխատում է բամբակի ցանքսերը ավելացնել։

---

## Լենինի գործը

Վողջ աշխարհի բանվորներն ու աշխատավոր գյուղացիները մի առաջնորդ ունեն. դա Լենինն է։ 30 տարի յե անցել, վոր նա բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության զինվոր գրվեց։

Այն որից բանվորն ու չքավոր գյուղացին իրենց կռիվը տանում են Լենինի առաջնորդությամբ. գլուխ ու սիրտը Լենինն է, նա յե կռվի պլան գծողը։ Յերբ բանվոր դասակարգը հաղթվում եր, Լենինն եր, վոր խորհուրդ եր տալիս չհուսահատվել, այլ մի փոքր նահանջել՝ կռիվը նոր ուժերով վերսկսելու համար։

Այսօր բանվորներն ու գյուղացիները կռվում են իշխանությունն իրենց ձեռքում պահելու համար։ Բայց ինչպե՞ս։ Դրա պատասխանն ել Լենինը տվեց։—Խորհրդային իշխանությունը պահելու համար բանվորն ու գյուղացին միասին պիտի գործեն։ Նրանք ձեռք-ձեռքի տված պիտի աշխատեն մեր յերկիրը շենացնել։ Միայն այս պայմանով խորհրդային իշխանությունը կարող է հաստատ մնալ։

Ահա թե ինչու այնքան թանկ է մեզ բոլորիս համար ընկ. Լենինը։

ԱՐԽԻՎ
ԳՐԱԴԱՐԱՆ

տանում և անգրագետ դառնում։ Պետք է սովորել առանց դժվարության, սահուն և ազատ կարդալ։ Յուրաքանչյուր ազատ րոպեյին պիտի կարդալ, գրել և վերջնականապես գրագետ դառնալ։

Ինչքան գեղեցիկ վոտանավորներ, յերգեր, պատմըվածքներ, պատմական և գիտական գրքեր կան գրված.—մարդկային մտքի մի ամբողջ ովկիանոս։ Յեվ դեռ ինչքա՜ն նոր գրքեր պիտի գրվեն։ Զե՞ վոր մարդկությունը յերբեք կանգ չի առնում, այլ միշտ առաջ է գնում։

Հենց վոր մենք մեր յերկրի վերքերը բուժենք, բարձրացնենք մեր տնտեսությունը, լավացնենք և գեղեցկացնենք մեր կյանքը, մեր ամբողջ ազգաբնակությունը կազատվի տգիտության խավարից և կը շարժվի դեպի առաջ։

Նայիր, ընկեր, յետ չմնաս։ Սովորիր, ժամանակ մի վատնիր։ Հավասարվիր առաջավորներին։ Լ. Տրոցկի

---

## Ինտերնացիոնալ

Յելե՛ք, մերժված վորդիք կյանքի,
զոհեր ովի ու տանջանքի,
ցասումն արդար պայթել է արդ,
հառա՜ջ դեպի վերջին գոռ մարտ։
Յելե՛ք, սարուկ ամբոխ անհաղթ,
փշրի՛ր անցյալն հիմքից առմիշտ,
ու նոր մի կյանք կանգնիր անխախտ,
մի նոր փառքով, ուրախ, անվիշտ։
Սա վերջին վճռական մեր կռիվն է արդար,
Ինտերնացիոնալը փրկե պիտ վողջ աշխարհ։

Չըկա ուրիշ փրկիչ վերին՝
աստված, արքա կամ դատ արդար.
հենված միայն քո ուժերին՝
փրկիր թե քեզ, թե վողջ աշխարհ։
Ճընշիր բռնի սև ուժն համառ,
գիշատողին անսիրտ, անհագ.
շուտ բոր...
կռիր, ...
Սա...
Ի...

# Ստեփան Շահումյան

Ստեփան Շահումյանը Բագու վոտ դնելով՝ սիրելի դարձավ բոլոր բանվորներին։ Նրա դռները միշտ բաց էյին կուսակցական և անկուսակցական բանվորների առաջ։ Նա սիրված էր վոչ միայն իր համախոհ ընկերներից, այլ և իր հակառակորդներից։ Մի դեպք նրա կյանքից.—

Յերբ մի խմբակ՝ չճանաչելով Շահումյանին՝ վորոշել էր սպանել նրան, խմբակի անդամներից մեկը ծանոթանում է Ստեփան Շահումյանի հետ և գնում նրա հայերեն լեզվով դասախոսության։ Դասախոսությունը լսելուց հետո նույն այդ մարդը յերդվեց իր կյանքը չխնայել Ստեփանի համար և մտավ կոմունիստական կուսակցության մեջ։

**1918** թվին Շահումյանը Կովկասի Արտակարգ Կոմիսարի պաշտոնով ապրում էր 2 փոքրիկ սենյակներում։ Յերբ նրան հարց տվին. «Ինչպե՞ս ես ապրում քաղաքի ծայրում, ուր ամեն մի րոպե կարող են սպանել քեզ»։ Նա հանգիստ պատասխանեց.—«Այդ բանով յես չեմ հետաքրքրվում»։

Շահումյանը Կովկասի բանվորության ղեկավարն էր. և այդպես էլ հեղափոխությունն անվանեց նրան։

---

# Ընկ. Տրոցկու նամակը կարմիր զինվորին

Մայիս 1-ի առթիվ գրում եմ քեզ, և դու կարդում ես իմ նամակը։ Գրագիտությունը կապում է մեզ իրար հետ։ Այդ է նրա մեծ ուժը։

Այն բոլորն, ինչ մարդկային հազարավոր սերունդներ մինչև այժմ կատարել, սովորել, տեսել և զգացել են, գրված են գրքերում։ Յեվ վորովհետև դու գրագետ ես, այդ բոլորը քեզ մատչելի յե։

Քեզ կարդալ-գրել սովորեցրեց Կարմիր Բանակը։ Յեղբայրաբար շնորհավորում եմ քո այդ մեծ հաջո-
...նը։ Այժմ դու ձեռքումդ ունես գիտության
...անալին։ Բայց տես՝ կես ճանապար-
... Ով կիսագրագետ է, նա շուտ է մո-

-100-

ՀՀ Ազգային գրադարան
NL0835585

Ш 97
194